ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2026 թվականի N 827-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2026/2027 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն իրականացնել պահուստային տեղերի բաշխումը և բուհերին տրամադրված տեղերի շրջանակում՝ թափուր մնացած տեղերի վերաբաշխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

11.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունիսի 11-ի N 827-Ն որոշման

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դասիչ	Բուհի անվանումը, մասնագիտություն, կրթական ծրագիր	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղեր
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան (հայկական բաժանմունք)		**20**
011401.00.7	**Մասնագիտական մանկավարժություն**	**1**
011401.09.7	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	1
041201.00.7	**Ֆինանսներ**	**3**
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	3
041301.00.7	**Կառավարում**	**3**
041301.01.7	Կառավարում	3
041401.00.7	**Շուկայագիտություն (մարքեթինգ)**	**1**
041401.01.7	Շուկայագիտություն (մարքեթինգ)	1
042101.00.7	**Իրավագիտություն**	**4**
042101.02.7	Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք	2
042101.04.7	Քրեական իրավունք և դատավարություն	1
042101.05.7	Գործարարական իրավունք	1
061101.00.7	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**	**3**
061101.05.7	Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում	3
071301.00.7	**Էներգետիկա**	**3**
071301.05.7	Այլընտրանքային էներգետիկա	3
091801.00.7	**Հանրային առողջություն և առողջապահություն**	**2**
091801.05.7	Թվային առողջապահություն	2